

Տողեր շարադրություններից

Հայ ընտանիքները առանձնանում են իրենց հատուկ հարգանքով ու սիրով դեպի տան մեծերը՝ տատիկներն ու պապիկները: Այդպիսին է նաև մեր ընտանիքը:

Տատս յուրահատուկ աշխուժության տեր կին է՝ հայ կնոջը հատուկ բարությամբ ու մարդասիրությամբ: Պապս ավելի խիստ ու չոր բնավորություն ունի: Նրանք կարծես լրացնում են մեկը մյուսին և միասին դառնում մի հետաքրքիր համադրություն: Մեծ է նրանց դերը մեր դաստիարակության գործում: Մեսրոպ Մաշտոցի, Սասունցի Դավթի, Հովհ. Թումանյանի մասին առաջին անգամ լսել եմ տատիկիցս, իսկ պապիկս իր պատմություններով իմ մեջ սերմանել է սեր դեպի հայրենիքը: Ես հպարտ եմ, որ իմ երակներում հոսում է հենց այսպիսի մարդկանց արյունը:

Բաղդասարյան Տիրան 8 (5) դասարան

Պապի՛կ, ինձ վստահություն ու հպարտություն են ներշնչում քո ճերմակ մազերն ու իմաստության խորհրդանիշ խորշոմները: Դու իմ պահապան հրեշտակն ես: Ես շնորհակալ եմ քեզ: Ների՛ր իմ չարաճճիությունների համար: Գիտեմ՝ կներես. դու ծով համբերություն ունես: Խոստանում եմ՝ կլինեմ արժանի թռռնիկ քեզ համար:

Թևոսյան Նարինե 8 (5) դասարան

Երբեմն ես նայում եմ տատիկիս խորշոմած ձեռքերին, որոնք ժամանակին եղել են նուրբ ու գեղեցիկ, և ակամայից սիրտս լցվում է աննկարագրելի հուզմունքով: Ասում եմ, որ ես շատ նման եմ իմ տատիկին, և ես շատ ուրախ ու հպարտ եմ, որորվիետև նա ամենագեղեցիկ ու բարի տա:

Ալավերդյան Աննա 8 (5) դասարան

Աշխարհի լավագույն տատիկը ապրում է մեր տանը: Նրա մեղմ ու բարի հայացքը արևի շողերի պես ջերմացնում է մեր տունը: Հիշում եմ՝ երբ ես փոքր էի, տատիկս ինձ համար մի հիանալի երգ էր երգում, որը մինչև հիմա հնչում է իմ ականջներում ու ջերմ հուշեր արթնացնում: Տարների ընթացքում տատիկիս մազերը աստիճանաբար ճերմակեցին (տեսնես որքա՞ն է իմ պատճառով սպիտակել), կնճիռներ ավելացան նրա բարի դեմքի վրա, բայց, միևնույնն է, նա ինձ համար մնում է ամենագեղեցիկն ու ամենահարազատը:

Գևորգյան Էդուարդ 9 (1) դասարան

Իմ տատիկը ամեներիտասարդ ու ամենագեղեցիկ տատիկն է: Երբ նա դպրոց է գալիս, շատերը կարծում են, թե մայրիկս է: Դա ինձ շատ է զվարճացնում: Ես ուզում եմ, որ տատիկս երբեք չձերանա, միշտ իմ կողքին լինի նույնքան գեղեցիկ ու երիտասարդ և մենք միասին ուրախանանք իմ նորանոր հաջողություններով:

Մատինյան Ալլա 5(1) դասարան

Իմ ծննդյան առաջին իսկ րոպեներից տատիկս եղել է իմ կողքին, ինձ գուրգուրել ու փայփայել է: Գիշեր - ցերեկ նա իմ կողքից չի հեռացել, երգել ու հեքիաթ է պատմել ինձ համար: Նա է լսել իմ առաջին թոթովանքը, տեսել իմ առաջին քայլերը: Տատիկս է ինձ սովորեցրել առաջին հեքիաթը, երգն ու ոտանավորը: Ես հիշում եմ նրա բերկրանքը, երբ ինձ առաջին անգամ դպրոց էր ուղեկցում: Ես սիրում եմ իմ տատիկին և ուզում եմ, որ միշտ լինի իմ կողքին: Թող աշխարհի բոլոր երեխաները տատիկներ ունենան:

Վառյան Մերի 5 (1) դասարան